

Ս Ե Կ Ո Ւ

Ա Մ Ա Ա Գ Ի Ռ

Ա Զ Գ Ե Յ Ե , Բ Ե Լ Ո Ւ Յ Ե , Գ Ր Ե Վ Տ Տ Ե Յ
Ե Ւ Ք Ե Վ Ե Յ Ե

Ա Թ Ե Զ , Ի Ւ Տ Ե Ր Ե

Յ Ե Ր Ա Ւ Յ Ե Դ Ո

Ե Տ Պ Ա Ր Ա Ն Ա Տ Ա Ր Ա Ն Ա Տ

1866





Ա Մ Յ Ա Գ Ի Ռ

ԵՐԱՎԵՐԵ, ԲԵՆԵՐԵՐԵՐԵ ԵՒ ԳՐԵՎԻՏԵՐԵ

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐՏ. ԹԻՒՅ.

ՀԵՂԱՆԻ ՄԻԱՅԻՆՑ

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1866

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱԶԳԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՅԻՍՐԱՍ տիեզերական թատր մի է, և իւրաքանչիւր ազգ՝ որոնք իրենց դերը կը խաղան ընդհանուր տեսարանիս վերայ, մէկ մէկ դերասան են. իսկ պատմաբանք և վիպահիօսք նոյն տեսարանիս հանդիսականներն են, որոնք աշխարհիս սկիզբէն մինչեւ իրենց օրերը ինչ դէպք և գործք որպատահած են ի գիր արձանացընելով, ապագայ սերնդոց ալ աչաց առջեւ զանոնք ի հանդէս կը բերեն, որով տիեզերական սօյն մեծ թատրս իւր մշտաբացիկ տեսարան մի ներկայ կ'ունենայ միշտ մարդս իւր դիմաց, որով իւր միաքը կը կրթէ փորձական դիտութեամբք դիպաց, եւ միրտը կը անուցանէ առաքինագործ արանց բարի — օրինակ և նախանձելի արդիւնքներովս, և հոգին կը կազ-

դուրէ նցին դէպքերուն մէջ նախա-
խնամիչ Վատուծոյ ցոյց տուած աստ-
ռածեղին զօրութեամբը : Եթէ այս-
չափ մեծ է պատմագրի մը աշխա-
տութիւնը , որ իւր հանճարոյն թե-
լսդրութիւնը և գրչին ուժով տիեզե-
րիս ամենածաւալ տեսարանը մարդ-
կութեան կը ներկայացընէ , եւ իւր
քննութեանցը հետ ընդհանուր դա-
տաստանին ալ կը յանձնէ՝ անաչա-
ռապէս զանոնք դատելու , նոյնչափ
առաւել մեծ ցաւ է և կորուստ յաջս
աշխարհի , երբ հանրական ներկա-
յացմանց մէջ այնպիսի կտորներ (Pièces
dramatiques) կը պատահին որոնք իրենց
հանդիսատեսներ չեն ունենար , եւ
կամ թէ ունենան անոնց աչքէն կը
վրիպին . եւ մարդիկ անոնց անգետա-
ըլլալով հետեւապէս անկարող կ'ըւ-

լան զանոնք քննութեան առնուլ, դատաստանի տակ ձգել, եւ անոնց միասակարութենէն եւ շահաւորութենէն իրենց կարեւոր դասը ընդունել:

Ղթէ անցեալ ժամանակիս բազմադարեան շրջանը միաք բերեմք եւ տիեզերական պատմութիւնն ալ դիմացնիս բաց ունենամք, մէկէն պիտի իմանամք ըսած խօսքիս ճշմարտութիւնը: Ու ասն զի պիտի նշմարեմք հոն այնպիսի մեծ վիճեր և դատարկ շրջաններ ամաց և դարուց, որոնք կրնային մեծ ու երեւելի դիպաց շարքով մի կցուիլ, և բովանդակ տիեզերիս պատմութիւնը կ'ըլլար միայար միակցուրդ եւ իբր շարսյարութիւն մի և հանրական դէպքի, կամ դէթիւրաքանչիւր ազդաց մասնաւոր պատմութիւնը աղլսաղլսեալ՝ մի և ամբողջական թատերագիրք մի կը կազմէին: Վանի որ դէպ ի հին դարերն ի վեր ելնեմք, այնքան աւելի մեծամեծ վիճեր ու պարապմիջոցներ կը դտնեմք, որոնց վերայէն կարծես թէ պատմագիրք ցատկելով անցեր են, և կամ թերեւս ժամանակը զիրենք ալ իրենց երկասիրութեամբքը միատեղնոյն մուացութեան վիճերուն մէջ գլորեր ու անհետ ըրեր է, ի անամք մեր ազդական հնագոյն և ամենէն երիցագոյն պատմագիրքը, ու կը տեսնեմք հոն որ դարաւոր ժամանակներու անցից պատմութիւնը ամենափոքրիկ ու նուազ տեղ մի պարունակած է. երեւելի անձանց ու թագաւորաց հազիւ թէ անունը յիշատակուած է, որոնց գործքերը և իւրեանց ժամանակի քաղաքական անցքերը գուցէ մեծահասոր գրքեր կրնային կազմը ւել ճարտար պատմագրի մը բեղմնաւոր գրչաւը: Այսպէս ուրեմն տիեզերի մէջ թատերական շատ մասեր

խաղցուեր են առանց վարագոյրը վերանալու և բաց մնալու ապագասից տեսութեան առջեւ: Չեմ համարձակիր հաւատատալ, թէ որ եւ է նշանաւոր անցք մի իւր հանդիսատեսը ու նեցած ըլլայ, այսինքն իւր պատմիչը սակայն վատահ եմ փորձիւ հաւատալու՝ թէ շատ պատմագրութիւններ ժամանակին ճանկերուն տակը փայտացած ու անհետացած են: Թողլով ուրիշ ազգաց կորուսեալ պատմագիրները, մեր ազդին մէջ միայն փնտըռելու ըլլամք 16 էն աւելի պիտի գտնեմք. օրինակի համար Մարիբասայ հայոց պատմութեան հաւատացած ու միակ կրնար աւելի պատմական նիւթեր պարունակած ըլլալ, զորս Մովսէս խորենացին համառօտութեան համար թողուցած է ինչպէս ինքը շատ տեղ կը վկայէ: Արտաւազդ Ա թագաւորին քերաթուածները, զորս Պլուտարքոս (1) կը յիշատակէ, որոնց մէջ խիստ հաւատական է որ Արտաւազդ իւր վշտահար գրչաւը թէ իւր անցքերը եւ թէ Հայաստանի քաղաքական դէպքերն ալ ներկայացուցած ըլլայ, որոնց համար ալ այնքան յարգ ստացած է ժամանակակիցներէն: Բ Արտաշէսի որդւոյն Վրոյրի բանաստեղծական քերթուածները, որոնք թէ ենթադրութիւնք համարուին այլոց, սակայն խիստ հաւատական է որ իւր երգերը՝ որոնք քաղաքական դէպքեր ալ կը պարունակէին անշուշտ Ամբատերեւելի սպարապետին քաջագործութեանց հետ պատուաստած, ի գիր գրոշմուած էին, և ժամանակը նախանձեցաւ զանոնք մեղ աւանդելու: Ասոնց կարգէն կը համարուին նաեւ Ուղիւսդ կամ Ալիմպիոս քուրմը, (2)

(1) Պլուտ. հտ. Դ. Եր. 138: (2) Խոր. Բ. 48:

Բարդածան ասորին հայագէտ, Արտիթէոս քրմորդի հայ՝ պատմիչ | ուսաւորչի վարուցը, Եղիշէի գրոց՝ Արծրունեաց ցեղին պատմութիւնը, զոր Բարծումա վերուցած է մէջէն, կըսէ թառվմա արծրունի⁽¹⁾. Ո՞վսէ սի խորենացւոյ չորրորդ գիրը, Ո՞մբրըէի վերծանողի պատմական գրուածքը, զորս դարձեալ կը յիշատակէ թառվմա արծրունին. Պետրոսի սիւնեցւոյ, Ծապհոյ բարդատունւոյ, Յովհաննէս սարկաւագ վարդապետի, Ո՞միթարայ անեցւոյ, Յովհաննու վանական վարդապէտի, Հասանայ հայ իշխանի Պուօշ կոչեցելոյ, Ո՞րապիսն կաթուղիկոսի եղեսացւոյ պատմական գրուածքները, և ուրիշ դեռ շատ պատմագրութիւններ, որոնք մեզ բոլորովին անծանօթ մնացած են, իրենց անունը ուրիշ պատմըսաց գրոցը մէջ չփիշուելուն համար. և ասոնց երկասիրութեանց կորըստեանը պատճառ որբան որ մենք ժամանակին հնութիւնը կը գտնեմք, բայց շատերուն ալ պատճառ մարդոց չար նախանձն կամ ատելութե կիրքն եղած է ըսեմք՝ չեմք սիսալիր. ինչ պէս է օրինակի համար Եղիշէի գրոց մէջէն Արծրունեաց տոհմին վերաբերեալ պատմական կտորները վերնալը: Ո՞րապիսն կաթուղիկոսին աշխատասիրած պատմութեան գրքին համար ալ կըսէ իրեն ժամանակակից պատմչին մէկը թէ «Օածկեալ եղեւ ինախանձուաց եւ յանհաւա-

(1) Յովհաննէս վարդապէտ մշցի, որ Հայուսանակ վարդերուն մէջ բնակած է, կը հասասէ թէ, յիշեալ վանաց մէկւն մէջ տեսած է ինքը Եղիշէի հին ձեռագրի մի մէջ առանձին պատմութիւն մի Արծրունեաց վերաց բարծումցի Եղիշէի գրոց մէջ ըրած խարդախութիւնը հեղինակին կենդանութեանդ ժամանակ եղած ըլլալով ըստ Արծրունեաց պատմքներին վկայութիւնը:

տից » և կը կոչէ զայն « պատմագիրք գեղեցկայարմար »:

Եթէ, ինչպէս որ պարտաւորութիւն է իւրաքանչիւր անհատի որ այս օրինակ աղգական հնութիւն մի և կորուսեալ աշխատասիրութիւն մի գիպուածով ձեռք ձգելուն, զանիկայ բոլոր Ազգին հազորդել, ներկայ և ապագայ պատմչաց իբրեւ աղգային պատմութեան նիւթ մատակարարել, այսպէս և մեք բաղցը պարտաւորութիւն մեզ համարելով՝ պիտի ջանամք Պարբերական թերթիս միջոցաւ հըրատարակել մերթ ընդ մերթ անցեալ դարուց աղգային գէպքերը, « Ելլարկ աղբային պատմութեան » վերնագրով: Ասոնց մէջ կընայ երբեմն գըտնուեիլ այնպիսի գէպքեր ալ, որ ։ Ո՞իբայէլ Զամչեանի ընդարձակ պատմութեանը մէջ ուրիշ տեսութիւններով մէջ բերուած են և հակառակ ճշմարտութեան: Ո՞եր փոյթն այն է՝ որ մեր պատմութեան թերին ըստ կարի լեցընեմք ճշմարիտ գէպքերով, և կը յուսամք որ ծառայութիւն մի ըրած կը համարիմք Ազգիս: Այս անգամ կարեւոր կը սեպեմք Ո՞եդեսունի (Թաքիրտաղը) մէջ Հայոց բնակութեան սկզբնաւորութեանը և անոնց քանի մի անցքերուն վերայօք խօսել, առաջնորդ ունելով մեզ ժամանակից և ականատես պատմիչը, այն է Գրիգոր վարդապետ Դարանաղցի կամ Լամախեցի:

Ակնէն բնակութեան Հայոց ի Թաքիրտաղ:

Եօթն եւ տասներորդ դարուն ըսկիզըն էր, յորում Հայաստան անտալի աղետից ու թշուառութեանց տեսարան մի դարձած էր: Ազգային պատմութիւնը, (1) մանաւանդ ժա-

(1) Մէք Վար Չալ հատ գւ գլ 15:

մանակակից պատմաբանք դառն արտ-
սունքներով առաւել՝ քան թէ մելա-
նաւ նկարագրած են նոյն ժամանակի
Հայաստանի կրած տառապանքները
թէ սովու երեսէն և թէ առաւելա-
պէս ելուզակաց ձեռքէն, որոնք Շե-
լալիք կը կոչուէին : Առնք երեւելի
փաշաներ և պէիեր էին, որոնք տէ-
րութենէն ասպատամբելով բազմա-
թիւ զօրքով կը ցրուէին բոլոր Հա-
յաստանի երեսը ու ոչ քաղաք և ոչ
դիւզ կը թողուին առանց ասպատա-
կելու, և առանց արեան գետեր
վաղցընելու ու անդթութեան նշան-
ներ թողլոյ հասած ու կոխած տե-
զերնին : Խեղճ ազգայնոց հետ մէկ-
տեղ կը տառապէր նաեւ այն ժամա-
նակ (1). Խմիածնի Աթոռը, փաշանե-
րուն դրած հարկերուն տակ ճզմուե-
լով՝ յետին աստիճան չուառութեան
հասած . Կաթողիկոսունք թափա-
ռական կը չըջէին : Հատ գեղերու ու
քաղաքներու ժողովուրդք, երեւե-
լի գերդաստաններ, որոնք յականէ
կը յիշատակուին պատմութեան մէջ,
չկարենալով հարկին ծանրութեանը
և ելուզակաց բարբարոսութեանը
գիմանալ, Պարսից երկիրը գաղթե-
ցին : Ես միջոցները, այսինքն 1606
— 1607, Կամախու երկրի ժողովուր-
դին մէկ մասը գէպ ի արեւմօւտք
գաղթելով՝ կայսերանիստ քաղաքին
մօտերը բնակեցան իբր բարեխնամ
տէրութեան անմիջական պահպանու-
թեան տակ յասլահօվի մնալու յու-
սով : Աեգեստոնի (Յէքիրտաղը) հայ
ժողովուրդը կազմող գաղթականք ալ
առնցմէ եղան . ամենքն ալ Կամա-
խու գեղաքանքէն խեղճ ու ելուզակաց
ձեռքէն իբր ի մօրէ մերկացեալ փա-
խլատական մարդիկներ, որոնք քիչ մի
առնեցած ստացուածքնին ալ ճամբան
ճախս ընելով, հաղիւ թէ եկան հա-

սան ի Յէքիրտաղ, որոնց նպատակն
էր մշակութեամբ և երկրագործու-
թեամբ ապրել . Երբ բաւական ժո-
ղովուրդ հաւաքուեցան հոն, Յա-
կոր վարդապետ տեսնելով անոնց ան-
գլուխ վիճակը, ու հազարումէ կ փոր-
ձանաց ենթակայ գտնուիլը, Պօլսոց
ազգապետաց հաճութեամբը տէրու-
թենէն առաջնորդական հրամանա-
գիր ընդունելով կ'երթայ հոն : Այն
պաշտօնը ձեռք ձգելու համար շատ
օգնած է իրեն նաեւ Խոալիլ փաշայն
որ Եէնիշէր աղասի էր և իրեն քա-
ղաքակից և “մօտակայ ազգային յինչ-
պէս կ'ըսէ Կամախսեցին : Յակոր վար-
դապետ առաջնորդութեան հետ մէկ
տեղ եկեղեցի շինելու համար եւս
յատուկ հրամանագիր տարած էր
հետը : Բազդը բերաւ որ քանի մի
օրէն հոն գնաց նաեւ Կամախսեցի
Դրիգոր վարդապետը իւր ազգա-
կանները ու քաղաքակիցները տեսնե-
լու, և մեծ ուրախութեամբ հիւրա-
սիրուեցաւ նորընտիր առաջնորդէն :

Խեղճ գաղթականք երբ իրենց
նոր հայրենեացը և նոր առաջնորդին
վերայ կ'ուրախանային ու քաշած տա-
ռապանքնին յիշելով կը միսիթարուէ-
ին, չէին գիտեր թէ ինչ մէծ ու
գմօխային չարիք կը պատրաստուէր
իրենց գլխուն անօրէն քահանայի մի
սեւ մատնութեանը առանց բացա-
ռութեան զոհ ըլլալու : Ենական է
մարդկան որ տեղափոխութեան ժա-
մանակ իրենց երկրին տւանդական
սովորութիւններն ալ թէ բարի և
թէ չար՝ հետերնին կ'ընկերանան .
Այսպէս Յէքիրտաղու ժողովուրդը
1607 ին աւագ ուրբաթու առաւօ-
տուն ըստ սովորութեան իւրեանց՝
ժամէն արձակուենուն՝ սյր ու կին,
քահանայ ու աշխարհական ամենքը
մէկէն կը վաղեն գէպ ի գերեզմանա-

տունը, և ննջեցեաները օրհնել տալ
լու պատճառաւ հսն կուտեն կը իր
մեն զեղխութեամբ : Այս օրերը հսն
կը գտնուի նաեւ Պօլիսէն եկող տէր
Դազար անունքահանայ մի օրոյ մա-
կանունն էր Ա, ազաւ, ասիկոյ եւս գե-
րեզմանատուն երթալով՝ երբ բնիկ
քահանայից իրաւունքը կը գողնար
գերեզման օրհնելով, բնակոնապէս
միւները կը զայրանան եւ կը սկսին
այնպէս դառնութեամբ վիճել տէր
Դազարին հետ, մինչեւ չարաչոր կը
ծէծէն զինքը :

Յիշեալ քահանայն իւր չար բը-
նուորութիւնը հսն կը յայտնէ . իւր
սաստիկ բարկութեան և ամբարտո-
ւանութեան կիրքը չիարենալով հան-
գարաեցնել, այնպիսի մատնութեան
ձեռք կը զարնէ, զոր լսելը միայն
մարդոյս սոսկում կու տայ : Կ'երթայ
ուղղակի լաբին ու ստելով անոր՝ թէ
շատ ժամանակէ ի վեր անոնց աւագ-
երեցն է և բոլոր ժողովուգեան խոս-
տովանահայրը և հետեւապէս ամեն-
ունուն գործոցը տեղեակ, կը ներկա-
յացնէ անոր առջեւ ժողովուրդը
իրեւ յանցաւոր ընդդէմ պատուց
Տաճկոց, որոնց աներուն մէջ վարձ-
քով կը բնակէին : Ասոկացաւ լաբին ու
մէկէն կանչել տալով քանի մի մէծա-
մեծ այլազգեք, պատմեց անոնց եւ
սաստիկ սպառնալեօք հրաման ըստ
որ մինչեւ երեք օր ամենեւին տաճ-
կի տուն Հայ անունով մարդ չգրու-
նուի, ու զանոնք թէ քաղքէն և թէ
բոլոր սահմաններէն գուրս վրան-
տեն : Հրամանին գործադրութիւնը
աղետալի էր : Օտակի ճրագալուցին
օրը փողոցները խառն ի խուռն լեց-
ուեցան ընտանիք՝ գուրս թափուելով
իրենց յարկերէն, ուր զստկական
պատրաստութեան ետեւէ էին, ու
խթման կերակուրներուն պաւտաննե-

րը կիսեփ ձեռութնին գուրս ինկան
արնէն : Կարծես թէ բնութիւնն ալ
աէր Դազարին հետ խօսք մէկ ըրած
էր ինեղներուն թշուառութիլ կը սկ-
նապատիկելու . վասն զի նոյն միջոցին
սաստիկ տարափ գալով փողոցները
ձախին գարձաւ, օդը ցրաեց, եւ
թալանովներուն երկիւղն ալ մէկ կուլ-
մէն զիրենք կը նեղէր : Անձրկած մը-
նացին ամենքն ալ, և ինչ ընելիքնին
չէին գիտեր :

Այս օրինակ փորձութեանց համ-
բերելու համար առարինի սիրու ու
կատարեալ խոհեմութիւն պէտք է .
ու ամիկ ժողովուրդ մի պախարակէլի
չէ երբէք, երբ հեռու կը գանուի սոյն
առարինութենէս : Կրցաւ նա համ-
բերել սովուն անհնարին աղէտիցը,
առկաց ելուզակաց աւարառութեց,
և գաղթելով կրցաւ անոնց բարեա-
րոսութենէն անձնապուր ըլլալ, բայց
երբ իւր հոգւցն պաշտօնեայ կար-
գեալ նուիրական անձի մի երեսէն
այս օրինակ դիւական մատնութեան
հանդիպեցաւ, իւր բարեպաշտու-
թեան ոգին սարսեց, հոգեւոր ըզ-
գացմունքներն ամբոխեցան, և իրենց
աչքին ամեն կրօնք հաւասար արժէք
ունեցաւ : “Երբ այսպիսի հրաշալի
օրեր, մեր պանդխոտութեան մէջ՝
քահանայ մի այս վիճակին զմեղ հաս-
ցընելու խիզճ շըրաւ, մեր կրած հա-
լածակները բաւական չսեպեց մեղ,
և այսպիսի սեւ օր տեսնել տուաւ,
ալ պէտք չէ մեղ քրիստոնէութիւ-
նը” : Այսպէս պօռալով խեղճ ժո-
ղովուրդը, միաբան միտքերնին կը
զնեն հետեւեալ առտուն դատարան
երթալ և իրենց օտար խստովանու-
նը տալ դատաւորին :

Երբ Վրիգոր վարդապէտը և քա-
հանայք տեսան ու ամիկին վերջին յու-
սահատութիւնը և իրենց հաւատոցը

վլուանգը , սկսան զսնոնք խրատել՝ երբ բեմն յուսադրելով և երբեմն յանդիմանելով իրենց տարօրինակ խորհուրդը , օրինակ բերելով անոնց ՚Վրիստոսի տեառն մերոյ կրած շարչարանքները և իւր աշակերտին ձեռօք մատնուիլը , և Ո. | ուսաւորչի կրած անտանելի նեղութիւնները , և ուրիշայս կերպ օրինակներով ու բարեյորդոր խրատներով հազիւ կարողացան անոնց սրտմութեան կրակը մարել և սրտերնին նստեցընել : Յետ այնորիկ այն դժնդակի ու մահառիթ վիճակէն ազատելու հնարք մի մոտածելով , հետագայ առտուն կ'երթայ ՚Վրժիդոր վարդապետ քանի մի երեւելիներով մեծամեծ Տաճկաց տուները և լալական ողբովք կ'իմացընեն անոնց , թէ ինչպէս խեղճ և անմեղ ժողովուրդ մի օտարական քահանայի մի ձեռօք չարաչար մատնուած է ագահութեան պատճառաւ : | Յւ որով հետեւ իրենց աղքատութիւնը չերներեր որ անոնց դիմացը դատարկաձեռն չերեւէին , վասն որոյ կը խօստանան՝ որ եթէ իրենց աղաչանքը ընդունուի և խեղճ ժողովուրդը դատաւորին անիրաւ վճռէն ազատելու ըլլան , իւրաքանչիւր անհատ ըստ կարողութեան ամիս մի՝ աւելի կամ պակաս՝ անոնց այգիներն երթան ձրի աշխատին : | Յո ճամբով հազիւ թէ կը կարողանան ի գութ շարժել անոնց սիրաը , որոնք միմիթարելով եւ յուսադրութեամբ զերենք ճամբելէն յետոյ , կ'երթան շիտակ դատարանը լադիին քով դատաստան խընդրելու յանիրաւի դատապարտելոց համար , ու կ'ըսեն . | ՚Վէկ չարակամի խօսքով առանց վկայութեան ինչու այդ վիճակը հասուցիր խեղճ հայերը . միթէ տէրութենէն հրաման ունէիր այդ բանին համար : | ՚Ենք

տեսած ու լսած եմք որ ի Պօլիս Տաճկի տուն չկայ որ Նայ վարձուոր ընդունուի . մինչեւ թագաւորին տունը որ ՚Վիութաբի կ'ըսեն , խառն կը ըրջին հայն ու տաճիկը , և ամենեւին այդ օրինակ գործ չեմք լսած իրենց համար : | Նշպէս որ Պօլսոյ ամեն մեծ ու պզափկ խօսմաները զիրենք կ'ընդունին ու կը սիրաշահեն , մենք ալ կ'ընդունիմք՝ ինչ որ այլ ըլլան : | ՚Երդ , հրաման ըրէ որ ամեն մարդ իւր բընակութիւնը դառնայ . բաւական է ողորմելիներուն քաշած օտարութին ու պանդխոտութիւնը , մենք ալ նոր նեղութիւններով զիրենք չվշտացընեմք իրենց մեծ պատալայի օրերը ” : | ՚Ապին զինքը մեղադրանքէ ազատելու համար պատասխանեց , թէ իրենց ձերմակ—մօրուս մեծ փափալն է մատնողը : | Եւսոի անմիջապէս բոլոր քահանաները ժողուելով բերել արւին որ ցուցընէ իրենց որ քահանան ըլլալը , որպէս զի սրախողխող ընեն զինքը այլոց օրինակ ըլլալու համար : | ՚Այց երբ մատնիչ քահանայն անոնց մէջ չգտան , մարդ հանեցին բոլոր քաղաքը խուզել ու վնտըռել զինքը • բայց տէր ՚Ազգար շատոնց նաւ մի մատնելով Պօլիս անցեր էր : | ՚Այն օրը լադին մունետիկի ձեռօք հրաման ըրաւ բացօթեայ ժողովրդոց , որ ամեն մարդ կրկին իւր յարկը դառնայ ու ապահով ըլլայ : | ՚Ի յաջորդն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԼԱԴԱԲԻՈՑ

| ՚Եր ՚ադաքիոյ արժանապատիւթակիցը , ինչպէս ինքն ալ կ'ըսէ , այս անգամ | ադաքիոյ գիւղօրէից վիճակին շարունակութիւնը ընդհատելով , ՚Վէսապ գիւղի վերայօք տէր զեկութիւններ կը հաղըրդէ մեզ , նաև A.R.A.R@

մակը թէպէտ քանի մի ամսոյ ի վեր
է ստացած եմք , սակայն ուրիշ նիւ-
թերու պատճառաւ , անոր հրատա-
րակութիւնը բաւական ուշցաւ :

• Քէսապ գիւղը Աելեւկից Շ'էպէլ
— ադասա (1) ըսուած լեռան արեւել-
եան ու հարաւային ստորոտներուն
մէջտեղը կ'յսնի : Արեւմտեան ծովե-
զերքէն գրաստու ընթացքովև պարզ
օդով հազիւ չորս ու կէս ժամու մէջ
կընայ մարդ մինչեւ գագաթն ելնել,
որ իրմէ ցածագոյն երկրորդ գագաթ
մի եւս ունի , որոյ վերայ հարազամ
ճգնաւորի անուամբ հոյակապ վանքի
մի աւերակներ կը տեսնուին , ուր
տեղ մերազգի լուսաւորչաւանք
տարին անգամ մի վարդավառի շա-
բաթ երեկոյին ուխտի կ'երթան , և
հետեւեալ առտու պատարագի խոր-
հուրդն ալ հօն կը կատարեն . որոյ
աւարտմանէն զինի բողոք ուխտաւորք
վանուց աւերակներուն չորս կողմը^ը
խումբ խումբ կը ցրուին ու մինչեւ
երեկոյ կերուխով կը զուարձանան :

Իուն գիւղին մէջ կան ամփոփ
իբր 300 տուն հոյազգի . անկէ ի զատ
կան նաեւ ցրուած մերձակայ բլրակ
ներուն ու ձորերուն մէջ , որոնք մէկ
մէկ յատկացեալ անուամբ ագարակ
ներ են . ասոնց մեծագոյն մասը միով
անուամբ խալատուրան կը կոչուի ,
որ Քէսապէն մէկ ու կէս ժամ հե-
ռու է : Շ'էպէլ—ագուայէն ի զատ
կա նաեւ կիւնիք լեռը , և ուրիշ մի
ալ Տօնիք անուն՝ որ քառաժայու ու
ահուելի լեռ մի է : Խակ միւս բլրակ
ներուն ու ձորերուն անունները , ուր
կը բնակին հայք , կ'ըսուին Խօքիւզ
օլուգ , Պաղչաղաղ , Քէօքէնէ , Չա-
գալձըգ , Չընարձըգ , Տիւզ աղաճ ,

(1) Շ'էպէլ—ադասա արաբացւոց լեզուով կը նշանա-
կէ Քէլ-դար:

Լոկի էօրէն , Վայաձըգ , Տիւստիւր ,
որոնց մէջ 50 տընէն սկսեալ մինչեւ
5 և 3 տնուոր բնակիչ կը գանուին :
Ունեւոր մարդիկ ունին իրենց հա-
մար ամառուան ու ձմեռուան յա-
տուկ բնակատեղի , ուր ըստ եղանա-
կին կը տեղափոխին . իսկ աղքատք մի
եւ նոյն խրձթին մէջ կ'անցընեն տար-
ուան չորս եղանակն ալ : Խւրաքան-
շեւր բնակարանաց քով կան անոյշ
բարեհամ աղքիւրակներ . բայց դար-
ձեալ չհաւասարիր Քէսապի հասա-
րակութեան խմած ջրին , որ թէ թե-
թեւ է և թէ ցուրտ :

• Քէսապցիք ու շրջակայ գիւղօրէից
բնակիչները որքան որ բնակութեամբ
իրարմէ հեռի են , նոյնքան ալ բնա-
ւորութեամբ կը տարբերին . կան մէ-
ջերնին ժողովուրդ որ բաւական աշ-
խուժութիւն ունին ու մշակելի միտք
ու սիրտ ունենալ կը ցուցընեն , բա-
րակամիտ՝ բայց անկիրթ մնացեալ .
կան ալ որ ընդհակառակը անգործա-
սէր , դատարկաշրջիկ ու թափառկոտ
կեանք վարող են : Աղքատք իշխանաց
ձեռօք միշտ կը հարստահարին , թէ-
պէտ եւ իրենց հարկն ու տուրքը կը
վճարեն :

• Քէսապ գիւղի մէջ 12—13 տա-
րիէն ի վեր է ամերիկացի բողոքա-
կանք մտած են , որոնք պաշտպան
ցուցընելով զիրենք ընդդէմ հարըս-
տահարողաց , և խոստանալով եւս օգ-
նել անոնց տրոց մասին , յաջողած են
մէկ քանի տգէտ ու պարզմիտ հա-
յեր որսալ ի բողոքականութիւն . ժա-
մանակն ալ օգնելով իրենց , երբ ժո-
ղովուրդք առանց առաջնորդի և հե-
տեւապէս առանց խնամոց ու հոգա-
տարութեան երեսի վերայ մնացած
է , անոնց թիւն ալ հասած է մինչեւ
հարիւր տնուորի : Ուստ տարիները
20—25 հազար զուրուշ ծախս ընե-

լով ժողովարան մի եւս կառուցած են 60 զուռուշի հրամանադրով մի . ունին իրենց հոգաբարձու մի պատուելի անունով, որ մշտնջենաւոր է և ամսական կընդունի ամերիկացւոց ընկերութենէն :

Հողոքականներէն ի զատ 10—15 տընի չափ ալ հողմէականութեան դարձածներ կան | իրանանու Անտօնեան միաբանից ձեռքով. ասոնք 80 հազար զուրուցով եկեղեցի մի չենած են հանդերձ վանքով մի . թէ ասոնք մէկ կողմէն և թէ բողջական եղաղները միւս կողմէն միշտ կընախատեն ու թուքումուր կընեն մընացեալ խեղճ ժողովուրդը, որ առաւել տիկար մասն է, և խրոխտալով կը հպարտանան անոնք վերայ :

Խալատուրան գիւղը, որ Վէսապէն մէկ ու կէս ժամ հեռու է ըսինք, 50 տուն հայ | ուսաւորչական ժողովուրդ կան, որոնք ունին իրենց սեպհական ազգային եկեղեցին, զօր վեց տարիէն ի վեր է նորոգած էին : Այն եկեղեցւոյն կից ու իբր անոր բակին մէջովը հողմէական հայու մի տունը կայ, | ալանաէր Յովհաննէս անուն : Այս անձը բաւական խօսքի տէր ըլլուրվ, հակառակութեսքւոյ շարժեալ փլցընել կու տայ նորոգուած եկեղեցին ի նախատին հաւայոց . կը բողջեն աղքատ ժողովուրդը բայց մտիկ ընող չկայ : Քանի մի առաջնորդներ եկան գացին, և եկեղեցւոյն շնութեան հրամանադրին զօրութեամբը, զօր տէր Վէսորդ անուն քահանայն Պօլիս գացած ու հանել առած էր 1862 ին ազգային Վարչութեան միջոցով, ոչ ոք կարողացած է իրաւունքը մտիկ ընել տալ Օրտու գիւղի բանաւոր Ֆ-պի-Ռէհմէտ աղային, որ 40 տարիէ ի վեր Ֆ-պի-Ռութիւն կընէ այն կողմէրը,

Ասիկայ հողմէականաց կողմէ պաշտամանելով և ակնածելով անոնցմէ՝ | երբից կողմէն միշտ օգնութիւն գտնելնուն համար, բնաւ ամենեւ ին հայոց իրաւանցը ունկնդիր չըլլոր, եւ անոնց բողոքներուն միշտ ունկնախիցէ : Խեղճ հայը այս օրուան օրս 50 արնուոր առանց եկեղեցւոյ մնացած է մէկ հողմէականի մի հակառակութեան երեսէն :

Իոլոր այս հայոց քաշած նեղութեանց ու հարստահարութեց պատճառ ես տգիտութիւնը գտած եմ. վտան զի ուսումնական ու բանիբուն անձը թէ եւ հարուաս ալ չըլլոյ, կրնայ գէթ բարոյապէս ազգեցութիւն բանեցընել ընդգէմ իւր սոսին, և իրաւունքը պաշտել տալ անոր գոնէ բռնի : Ուստի այն ճշմարտութեանս վերայ յենլով կ'ըսեմ՝ թէ գիտութիւնը միայն պիտի կարենայ՝ ոչ միայն այս վիճակիս, այլեւ ուր ուրեք որ հայ ժողովուրդը թէ ներքին և թէ արտաքին ազգեցութեանց ձնշման տակ կը գտնուի, գիտութիւն ուսումնամբ միայն պիտի կարենան իւրենց վիճակը բարւոքել, բարոյական ուժերնին աւելցընել ազգային իրաւանց տէր ըլլալ, և ազգութիւննին պատուել տալ : Վէսապի և շրջակայ գիւղօրէից բարոյական վիճակը յետին աստիճանի խեղճութեան մէջ է . օրինաւոր վարժատուն չունին . 200 ի չափ տղայք թափառական կը շրջին աշխարի խումբի պէս, և միայն 40—50 տղայք հազիւ թէ դպրոց կ'երթան անկանոն կրթութիւն մի ստանալու համար : Այսու ամենայինիւ գարձեալ մէծ շնորհակալութեան արժանի է Վէսապիցի ֆէօրէկեան պարօն Պօղոս պատուելին, որ 2000 զուրօւշ տարեկանով յանձնաւու եղած է աղջայոց կրթութիւնը և անոնց ուս-

մունք Մատակարարելու հոգը : Յիշեալ պատուելին բողոքականութենէ նոր դառնալով իւր հարազատ եկեղեցւոյն գիրկը , հրապարակաւ խոստովանած է իւր խղճահարութիւնը : « Տասը տարիէ ի վեր է , ըսաց նա , Հայաստանեաց ուղղափառ եկեղեցւոյ գէմ զինեալ եմ . իսկ հիմայ խիղճեղած է ինձ ընդդէմ ճշմարտութեն մաքառիլս , երբ յայտնի տեսած եմ ժողովական բողոքականաց ստութիւները . որմնք իրենց ժողովրդին մէջէն ոմանց տղայքը 4—5 տարիէն ի վեր է առանց մկրտութեան թողուցած են , մկրտութիւնը փրկարար խորհուրդ չընդունելնուն համար , ըսելով՝ թէ առանց մկրտուելու ալ տղայք արքայութեան ժառանգորդեն . որոնց որ ուղեն՝ իրենց ընթրած հացէն կը հաղորդեն , և չուզածնին կը զպկեն . նաեւ հօր մի յանցանացը համար զաւակը հոգւոյ փրկութենէ զուրկ համարելով , անօգուտ կը համարին անոր մկրտութեան խորհուրդը : Այսպէս տեսնելով որ խիստ հեռի կը քալէն Աւետարանի ճշմարտութենէն ու Փրկչին պատուէրներէն , զղալով ետ դարձայ Անասեան Պ. Յակոբ եղբօր հետ ի ծոց ուղղափառ եկեղեցւոյ Հայոց : Ի՞նդոքականաց ծառայած ժամանակս 3,600 զուրուշ տարեկան կ'ընդունէի , ճշմարտութեան հակառակ սորվեցը նելուս համար . իսկ արդ լաւ համարեցայ ճշմարտութեան հետազանդելով և իմ համազդի և համարիւն ազգիս տղայոց վրայ գթալով՝ 2,000 զուրուշ տարեկանով մանկավարժութիւն ընել : Վասն զի մեծ ցաւէր իմ սրտիս քանի որ իմ ազգիս տղայքը անկիրթ և անվարժ կը տեսնէի . եւ այս իմ վերադարձովս գուցէ որ մի ազգիս վրայ գալիք մեծ վնասու մի

առաջքը ըստ կարողութեան իմում առնելով , ես զիս երջանիկ սեպեմ... » : Քէսապցիք , կը յարէ մեր թղթակիցը , վերջին յուսահատութեան մէջ են , անինամ մնալով և առանց առաջնորդի , զուրկ ի ինամածութենէ Ալսոյ Աթուոյն և Արբազան Պատրիարքաց : Տասուերկու տարիէ , կը սեն , որ մեր գլուխն խոռվութիւն , գժտութիւն , տուգանք պակաս եղած չեն . և ոչ մէկէն օգնութիւն , պաշտպանութիւն , կամ միսիթարութիւն մի ընդունած եմք մինչեւ ցայսօր , բաց ի՛ Նիկողայոս եպիսկոպոսէն և Իներից հանգուցեալ տէր Վէորդքահանայէն . անօնք ալ հիմայ մէկերնին վախճանած է , և միւսը իւր բարեխնամ պաշտպանութենէն զմեզ զրկած է Իներից առաջնորդութենէն ենելէն ի վեր : Յետ այնորիկ Ալիլեկից Աթուոյն կողմանէ արժանաւոր Առաջնորդի մի երես չաեսանք . Ո՞ես րոպէ եպիսկոպոս (1) մի կար , որոյ ձեռքէն բան մի չէր գար , և Պէլենցւոց ու Անտիոքացւոց հետ չկրնալ վարուելուն համար , գլուխն առաւ Երրուսաղէմ գնաց : Վանի մի տարիէ ի վեր է Իներմէզէն Յովհաննէս վարդապէտ ուղարկած են Անտիոք , որ Վէսապ ալ գալով՝ անուննին գըրեց , Աահմանագրութիւնը ձեզ սանկ պիտի ընէ , նաև պիտի ընէ ըսելով , ուսկէ խեր մի չտեսանք . Վանի մի ժամանակէ ի վեր կը լսէինք թէ Արիստակէս եպիսկոպոսը հոս ալ պիտի գայ . հայ այսօր . հայ վազը կու գայ և զմեզ նեղութենէ ու նախատինքէ կ'ազատէ ըսելով՝ փուձ տեղը սպասեցինք մեծ ակնկալութեամբ , և յետոյ լսեցինք որ երեւելի քաղաքները

(1) Այն Եպիսկոպոսը 1860 ին Երուսաղէմի մէջ վախճանեցաւ :

այցելութիւն ընելով և զմեզ անխը-
նամ թօղլով մեկներ է . Հիմակ ալ
շատ չեղաւ՝ Եփրեմ վարդապետը
ծայրագոյն անուտմք , Կիրակոս կա-
թողիկոսի կոնդակաւ և Արիստակէս
եպիսկոպոսի յանձնարարական գրովը
այս կողմը խրկուեցաւ : Այս Աւշա-
բունի վարդապետը , բարքովը թե-
թեւ քան զիւր համբաւը , առանց
խոհական ընտրութեան արժանաւոր
անձինքը թօղլով , և տէրութեան ա-
ւելի հարկ տուովները զատելով թա-
զական խորհրդաց անդամ ընտրուելու
արժանաւոր են ըսելով . 12 հոգիէ
բազկացեալ ժողով մի կազմեց . որոնց
և ոչ մէ կուն ձեռքէն բան մի կու-
գայ : Ո՞ւր ազգին արհամարհանաց
վիճակէն աղատելու ալ յօյսերնիս չը
մնաց . եթէ սրբութիւնդ ալ (առ
Զաքարիա վարդապետն) այս եղե-
լութիւնները ի Կ. Պօլիս և յշրու-
աղէմ շիմացընես , վերջին յուսահա-
տութեան ծայրը հասած եմք : Ո՞ւր
լածին նայելով՝ սուրբ Երուսաղէմի
նորրնտիր Պատրիարքը ազգասէր անձ
մի է . եթէ եղելութիւնները ճիշտ
գրելով իմացընես , կարելի է մեղ-
օգնութիւն մի ընէ : Եւ կամ ի Պօլիս
առ Աղդային Վարչութիւնը գրելով՝
անկէ պաշտպանութիւն մի գտնել
չուաս , գլխունուս ճարը ուրիշ կերպ
աեսնելու եմք Արդարեւ ,
կըսէ մէր ականատես և ականջալուր
թղթակիցը , իրենց բոլոր գանգատ-
ները իրաւացի են , որոնց կարեկից
ըլլալով . և առ ժամն չկարենալով բան
մի ընել , միխթարեցի զիրենք բարե-
յորդոր ըլլալով՝ իրենց յօյսը հաս-
տատուն ունել Աղդային Վարչու-
թեան վերայ , որ օր մի չէ նէ՝ օր
մի անշուշտ դէպ ի իրենց պիտի դար-
ձընէ իւր ուշը , թէ որ կարգը գա-
լու ըլլայ :

Ասոնք են աւասիկ Քէսապ գիւ-
ղի ազգայնոց արդի վիճակին վերա-
յօք տուած քաղուածոյ տեղեկու-
թիւնները :

Հարկադր ծանուցում :

1. Աթոռոյս կառավարութիւնը
անհրաժեշտ պարտաւորութիւն կը
համարի ծանուցանել ընդհանուր աղ-
գիս , որ Ամենապատիւ Տ.Տ. ԵՍԱՅԻ
Որբաղան Պատրիարք Հօր գահակա-
լած օրէն սկսեալ բոլոր այն միաբա-
նից թէ վարդապետ և թէ սարկա-
ւագ , որոնք ի 1. Աթոռէս հեռաց-
եալ են , իրենց ձեռքը գտնուած վը-
կայագիրները աչքէ անցընելով , ա-
նոնք որ իրենց յօժար կամօքը և կամ-
ուրիշ որ և է պատճառաւ հրաժա-
րած են Ո՞իաբանութենէս , զոհե-
լով 1. Աթոռոյս վերայ իրենց ունե-
ցած միաբանական իրաւունքը , ա-
մենեւին իբրեւ միաբան 1. Յակո-
բայ վանաց չընդունուին : Ա ասն զի
շատ անդամ պատահած է և կը պա-
տահի միշտ , որ հրաժարեալ վարդա-
պետ մի հայաբնակ քաղաքներ պալ-
տելով , և զինքը իբրեւ միաբան 1.
Աթոռոյս կեղծելով , շատ նուերներ
և ողորմութիւններ ժողված են յա-
նուն Երուսաղէմի . և միամիտ ժողո-
վուրդը շատ տեղ սովորութիւն չու-
նենալով կարդաւորաց վկայագիրնե-
րը փնտրուելու և ըստ այնմ վարուե-
լու անոնց հետ . այլ կամ անոնց ձեռ-
քերուն վերայ մահամեսութեան նը-
շաններ աեսնելով , եւ կամ իրենց
ուխտաւորութե ժամանակ նցն կար-
գաւորները 1. Աթոռոյս մէջ միա-
բան ճանցած ըլլալով , միամորէն կը
հիւրասիրեն զիրենք իբր 1. Յակո-
բայ միաբան , և նուերներ եւս կըն-

Տայեն յանուն Ա. Աթոռոյս և Ոմանք
եւս իրենց յօժար կամօքը ընդդէմ
ամենայն յորդորանաց և համօզակեր
բանից Արբաղան Պատրիարք Նօր հը-
րաժարելով Ա. Աթոռոյս միաբանա-
կան իրաւունքէն և հրաժարման վր
կայագիր ընդունելին յետոյ , պար-
տած տեղերնին զիրենք Ա. Երուսա-
լէմի միաբան կ'անուանեն և այնպէս
կը ստորագրեն իրենց անունը , ինչ
պէս զարմանքով տեսանք հրաժար-
եալ Արքիրոս վարդապետի սուրբ
կարապետի վանքէն առ Աստիսն ուղ-
ղեալ նամակին մէջ դրած ստորագ-
րութիւնը : Յիշեալ վարդապետը ոչ
միայն միաբանութենէ հրաժարեալ
է , այլ եւ ոչ իսկ ի սուրբ Աթոռու-
ձեռնադրուածէ : Ուստի կը ծանու-
ցանեմք օրհնեալ Ազգիս , որ այսպիս-
եաց ստորագրութիւն խարդախութի-
է , և է անընդունելի Ա. Աթոռոյս
թէ ինքը և թէ իւր ստորագրութիւն ,
և կը ցանկամք որ նոյնպէս համարուի
նաեւ ընդհանուր Ազգիս դիմացը :

Դարձեալ որ եւ իցէ եկեղեցա-
կան միաբան մի , որ առանց հրաժա-
րելոյ ի Վիաբանութենէ ու հրամանաւ
Արբաղան Պատրիարքին , կամ օդա-
փոխութեան և կամ ուրիշ բանաւոր
պատճառաւ մի յօտարութեան կը
գտնուի , առանց իւր վկայագիրը աչ-
քէ անցընելու՝ իրբեւ միաբան Ա. Աթոռոյս
ըլլալ որ հրաժարեալ միաբան մի մաս-
նաւոր նկատումներով ծածկել ուղէ
իւր հրաժարման վկայականը , և իրը
օդափոխուել ելած ձեւացընելզինքը :

Մագիրը մէր Օմիւռնիոյ Անսրուպեան
դպրոցի ներկայ վիճակին վերայ տը-
ւած մի քանի սառւգագոյն տեղե-
կութիւնները . լողարքութիւն անուա-
նած էր ընդդէմ ոգւոյ միաբանու-
թեանս , այս անգամ իւր 786 թը-
ւովք փութացեր է իւր խօսքը խո-
նարհաբար ետ առնոււլ , զգալով սոյն
բառիս ծանրութիւնը , և բարեմը-
տութեամբ գրուած ըլլալը կը խօս-
տովնի : Աւրախ եմք մէծարոյ խըմ
բագրին խոնարհաբարութեանը վե-
րայ , որ կընայ բարի օրինակ լինել և
այլոց յանդէտոս սխալողաց : Խոկ եթէ
դարձեալ մէր գրածները սխալ տե-
ղեկութիւններ կը համարի , կը հրա-
ւիրեմք զընթերցողները որ ուշա-
գրութիւնը կարգան Անմզումէի է ֆ-
քեարը , Աստիսն ու Անձմուան , ո-
րոնց մէջ անաշառապէս բանագա-
տութեան առնոււած են և մէր ըսած-
ներուն ճշմարտութեանը կը վկայեն :

Աթոքանապատիւ Խորէն վարդա-
պետը , որ օդափոխութեան համար
երեք ամսէն ի վեր է հեռացեր էր
սուրբ Աթոռէս , անցեալ շաբթու
վերադառնալով , սկսաւ վարել իւր
առջի պաշտօնը : Յոյտնի է որ յիշ-
եալ Աթոք . Հայրը Տպարանի տեսուչ
է և միանդամոցն Ուսումնական խոր-
հրեգորյն անդամ : Ամենապատիւ Արք-
բաղան Պատրիարքը իրեն յանձնեց
նաեւ այս անգամ յառանգաւորաց
դպրոցի մէջ կրօնագիտութեան դա-
ստուութիւնը :

— Անցեալ ամսոյս մէջ յառան-
գաւորաց դպրոցին համար երկու ա-
շակերտացու եւս գալով , մէկը Օվա-
ճըգէն Աւրավուէ Պօղոսեան և միւսը
Շապին զարահիսարէն Յովհաննէս
Տատեան անուն . որոնք լատին վա-

Արշալյա Արշարտեան լուգրա վէճ-ճը :

Յոյտնի է մէր բարեմիտ ընթեր-
ցողաց , որ Արշալյաս պատուական

նաց բժշկին (1) քննութեանը յանձնը և լով և իրենց մարմնոյ առողջ կազմուածքը բժշկին վկայութեամբը ըստուգուելով, Ուսումնական խորհրդաց միջոցաւ կարգեցան ի շարս յառաջաւորաց :

Ահաւասիկ բժշկին վկայագիրը :

J. E. J.

Attesto io sottoscritto d'averne visitato i due giovani, Serafino di Paolo di Ovagik, e Giovanni Dadian di Scibinkarahissar, e di averli essi trovati di robusta costituzione.

In fede di che, etc.

Dal convento del

S S mo Salvatore
Gerusalemme 3/10 66

Fr. Pier. Giov.
Franc. Medico.

— | աղաքիայէն խրկուած քէսապցի տիրացու Առեփանը, որ ինչպէս Աիօնի 8 թուոյն մէջ գրած եմք, յուլիս 31 ին քահանայ ձեռնադրուելով, և իւր քառասնօրեայ կրթութիւնը լրացընելով՝ անցեալ շաբթուս իւր երկրը խրկուեցաւ, ուր տեղ ժողվուրդը մէծ կարեւորութիւն ունին քահանայի :

Ամենապատիւ Արքազան Պատրիարք Հոյրը Պօլիս եղած ժամանակ, Վսեմաշուք Յովհաննէս Պէջը Տառեան բարեհաճած էր նուիրել սուրբ Աթոռոյա՝ ի յիշատակ անուան իւրայ հետեւեալ պատուական գրքերը, զօրս թէպէտ եւ անագան, այլ լի երախտագիտութեամբ սրտի կը փութամբ յիշատակել հոս զանոնք, որք են ընդ ամենը 47 կտոր :

Ագլաս, աշխարհացոյց տախտակաց գիրք՝ Եւրոպից միայն, 3 հատոր՝ փառակաղմ:

Ծնկաբանութեան գիրք (Flora Flu-

minensis) ։ Յովսէփ Արքահանո Վէլլոզյի, յորում պարունակին հանգերձ պատկերոք՝ Պրազիլիոյ մէջ գըտնուած տունկերը. 11 հատոր՝ ընտիր կազմ:

Դանապարհորդութիւնը զուրջ զայխարհաւ, հրամանաւ | ուի ձև թագաւորին Գաղղիոյ, յօրինեալ պատմաբանօրէն ի | ուի առ Ֆրէսինէ, 4 հատոր :

Պատմութիւն բրածոյ տնկոց, յօրինեալ յատոլֆ Պրօնկեարէ (M. Adolphe Brongniart). միակ հատոր : Երկրորդ հատորն է նոյնին Ագլասը, այսինքն երկրի իւրաքանչեւը խաւերուն մէջ գտնուած տունկերուն պատկերները:

Պատմութիւն՝ այգիներուն վնասակար եղող միջատաց, և ի մասնաւորի իլլուց վերայ : Միակ հատոր պատկերազարդ :

Ինդհանուր դիտողութիւնք անդամազնութեան յօդաւոր կենդանեաց՝ համեմատորէն . Հեղինակութիւն Հերբերտ Աթրոստիւ-բքէմի (Hercule Strasduckheim), միակ հատոր պատկերազարդ :

Տարրական Ագլաս տնկաբանութեան (Atlas élémentaire de Botanique), որուն մէջ կան 2340 պատկեր :

Օրագիր գործնական երկրագործութեան, պարտիզաց մշակութեան և ընտանեկան խնայողութեան . յամէ 1837—1844. ամբողջ 8 հատոր պատկերազարդ :

Կեղկեական տուն (Maison rustique du XIX siècle), 5 հատոր :

Բաղզուածք դասուց ուսմանց շինուածոց կամ ճարտարապետութեան կամքաց և թումբից, Ա. Ի. Սկանզնէ. (M. I. Sganzin) :

(1) Առորք Աթոռոյա հայոցի բժիշկը երեք ամէ ի վեր մեկնած ըլլալով, մինչեւ նոր բժշկին դաւատիպուած է Ս. Աթոռու օսոր բժշկաց քննութեանը յանձնել ընդեկ պատանիները :

Գիլք անտանաբուժութեան (Traité d'hygiène vétérinaire), 2 հատոր :

Դառգիլք՝ բնական գիտութեանց մէջ գործածելիք բառից, հանդերձ սուռգաբանութեամբք արմատական նշանակութեանց, 2 հատոր :

Դառգիլք՝ ի հայէ ի ռուս, աշխատասիրութիւնը Աղեքսանդրի Մակարեան խուռաբաշեանց, տակեալի Ո՞սկուա, 2 հատոր, փառակաղմ և ուկէզօծ :

ՆՈՐ ՕՐԵՑՈՅՑ

1867 ամի օրացոյցն սուրբ Աթոռոյս Տպարանին մէջ ի լոյս ընծայուելով, կը փութամք Միաբանութեանս կողմէն ջերմ շնորհակալութեամբ իւրեախտագիտութիւնը յայտնել խառագիւղի Ա. Ատեփաննոս եկեղեցւոց Արք. Տէր Երեմիա քահանային, որ բարեհաճեցաւ տօմարագիտութեան հարկաւոր ուսմունքը Միաբանութեանս աննախանձաբար հաղորդելով՝ անոր ազատ հածութեանը թողուղուղած ժամանակ, հրատարակելու ազգային օրացոյց : Եւ Միաբանութիւնս հանդերձ Ամենապատիւ Արքազան Պատրիարք Հոր՝ որ քան որ երախտագիտական արդեամբք ձանչեց ու պատուեց զյիշեալ Արք. Հայրը, այսու ամենայնիւ իրեն պարտաւորութիւնն սեպեց նաեւ ըստ յատուկ խնդրանաց աստուածասէր քահանայիս, անոր առ սուրբ Աթոռոց տուած սոյն շնորհքը արձանագրել ի տումարի վանացս յանմուաց յիշատակութիւն ապագայից :

Նաեւ ըստ խնդրոյ Արք. Հոր՝ սոյն տօմարական գիտութեան հետեւող և ուսանող եկեղեցականք իրենց նուիրական պարտք պիտի հա-

մարին, նախ յիշատակել միշտ նորա անունը ի ժամ՝ մատուցման սուրբ Պատարագին, երկրորդ՝ Միաբանութեանէս գուրս եղող անձանց չոսկեցնել : Ոյն բարեպաշտական թէութիւնները հաստատ պահելու խոստամբ՝ առաջիկոյ 1867 տարւոյն օրացոյցը փութաց Միաբանութիւնս ի լոյս ընծայել, և սեպտեմբեր ամսոյն մէջ Ամենապատիւ Արքազան Հայրը կանխեց իւր բոլոր միաբանից մէկ մէկ հատ ընծայել, բարեմաղթելով անոնց ընդ մերձակայ նոր տարւոյն նաեւ անձանձրոյթ յարատեւութիւն ուսմանց և գիտութեանց և բարենախանձ ոգւով միշտ իյառաջադիմութիւն կրթելու յօգուտ ընդհանուր Աղդիս և ի պարձանս Ոուրբ Աւխտիս :

Յիշեալ օրացոյցը կը ծախուի ի Պոլիս ամեն գրավաճառաց խանութը :

ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆՔ

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

(Տես թիւ 7 երես 108):

Ե. Հարցման լ-ծ-ն-իլ՝ լեռ եր ընդ ամենայն յունին 420 : Ը. Հարցման լ-ծ-ն-իլ՝ հասանելին յառաւը 25 : Թ. Հարցման լ-ծ-ն-իլ՝ լեռ վարան 360 լիոր : Ժ. Հարցման լ-ծ-ն-իլ՝ լեռ եր լուն 240 լիոր : ՃԱ. Հարցման լ-ծ-ն-իլ՝ ուներ վաճառական բանեկան 2376 : ՃԲ. Հարցման լ-ծ-ն-իլ՝ լեռ ենաւան 42 դրամ :

Հարցուն ժդ.

Ոմն յաշակերտաց իմոց առեալ խնձորս գեղեցիկս ի խարայ, գայր ընծայեցուցանել ինձ . պատահեցան նմա երեք պարկ ի խազուց . և հա-

Նին առաջին պարն զկէսն եւ զօրս
մասն խնձորոյն . նցնալէս և երկրորդն՝
զկէսն և զօրս մասն . նցնալէս և եր-
րորդն . և զմնացեալսն երեր առ իս
խնձորս հինգ : Արդ , գիտեա՝ թէ
ընդ ամենայն քանի լեալ էր :

Հայոց ձեւ .

Դինի կայր ի մի կարասի , վարդիւ
կազմեալ էին , և թակոցիք հձեայ ե-
րեք , եւ հրամայեցի հանել զգինին
անդր . մին տարաւ զերեք մասն , և
մին՝ զլեց , իսկ միւսն զօրեքտասան .
և զմնացեալն յայլ ամանս հանին , և
էր փառ (անուն չափոյ) յիսուն եւ
չորս : Արդ , գիտեա՝ թէ ընդ ամե-
նայն քանի էր լեալ :

Հայոց ձեւ .

Չի մի կայր ինձ աղնիւ , վաճա-
ռեցի , և գնոցն չորս մասինն կովեան
գնեցի , և եօթն մասինն այծեան , և
տասն մասինն եղինս , և 318 գահե-
կանի ոշխար առի : Արդ , գիտեա՝ թէ
ընդ ամենայն քանի գահեկան լինի :

Հայոց ձեւ .

Ես եկեղեցի շնուի , գաղատոն
(քարագործ) մի կալայ որ ածէր աւ-
ւուրն 140 քար , և յետ 35 աւուր
գործառնութեանն միւս այլ գաղա-
տոս կալայ և ածէր աւուրն 218 քար .
և որպէս նա նմա հաւասարեաց , ե-
կեղեցին կատարեցաւ : Արդ , գիտ-
եա՝ թէ քանի օրն հաւասարեաց :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆԻՑ

Անցեալ սեպտեմբեր առնոյն մէջ Ամերիկացի նիւ-
Եօրք քաղաքէն վաճառականի նառ մի հասաւ ի Յոպ-
ողէ նելի անուն : Այն առաջանաւոր նաւը ըստ
Ն . Տ . օգաստոս 16 ին մէկներ է , և 22 սեպտեմբե-
րի հասաւ Յոպգէռ նաւահանգիստը : Յիշալ նա-
ւին մէջ 40 մետրոր ամերիկացի բնամիկը կոյին գաղ-
թականիք 156 հոգիէ բաղկացեալ , որոնց նպաստին
և բնակութիւն հաստատել Սարոնի գաշտերուն մէջ ,
որոնք կրտսէն Յոպգէռն մինչեւ Երուսաղէմայ լե-
ռանց կիրճը , և Փղասացոց Երկինն մէջ , այն է Գա-
լացի գաշտերը : Ասմէք Մէսիսցի ըստած աղմագէն
էն . ունին իրենց հետ յատուկ քահանայ : բժիշկ և
գեղագործ . նպաստակինն է վաճառականութեան և
երկրագործութեան պարագել , և իրենց աղմագը տա-
րածելու յատուկ հոգ տանիլ . և այս նպաստակին հա-
մար պիտի բանան գարոց մի և եկեղեցի , այլ և հի-
ւանդանաց : Հետեւնին բերած են իրենց շարժական
բնակարանները տախտակի : Երկաթէ ու քառուչուէ ,
այլ և կառքեր , զոր սկասէ են արդէն իրենց հարկա-
ւորութեանը գործածէլ : Կնքէս իրենց աղմագին ա-
նունը գուշակէլ կու առայ . կրտսական մէծ հակամի-
տութիւն ունին Հրեթց հետ , և շատ բաներու մէջ
նախառնութիւն մի ունենալ կը ցուցնէն անոնց : Հա-
րաւաս մարդիկներ են և գործածաց , և կերեւիթէ
իրենց կրծքին խառ ըլքեռանդ են , վասն զի ինչ-
պէս բնակարաննեն՝ նցնպէս և յատուկ շարժական ե-
կեղեցի ալ բերած են հետեւնին :

LA COLONIE AMÉRICAINE DE JAFFA.

Un bateau à voile américain mouille depuis vingt jours devant Jaffa. Ce bateau qui vient de New-York, qu'il a quitté, il y a quarante trois jours, se nomme Nellie Chapin et appartient à un riche négociant; il a débarqué quarante familles qui composent ensemble 156 personnes. Le but de ces familles est d'établir une colonie dans les plaines de Saron et dans les terres occupées autrefois par les anciens Philistins. Ces gens forment une secte nouvelle de l'Eglise dite «du Messie». — Ils ont avec eux un de leurs prêtres, deux médecins et un pharmacien; ils s'adonneront au commerce, à l'agriculture et à la propagation de leur secte dans leur nouvelle patrie; et pour atteindre ce triple but, ils veulent établir parmi eux, une école, une église et un hospice. Ils sont munis de leurs maisons portatives faites de bois, de fer et de caoutchouc, de chariots et de tous les ustensils nécessaires. Comme il est facile de se l'imaginer par le nom même de leur secte, ils ont une grande affinité avec les Juifs, auxquels ils ressemblent dans beaucoup de choses. Ils sont riches, actifs et très dévoués à leur culte: aussi n'ont-ils pas oublié d'apporter avec eux une église portative.

Nous venons de recevoir ces détails d'une per-

Աղն տեղեկութիւնները Ամերիկայի հիւսապատճեն հազարդած ըլլալով, կը յաւելու թէ, այս 40 տնուոր գաղթականդ իբր առաջնարդ կը համարին, որոց պիտի հետեւին 3000ի չափ անձնիք եւս : Անցեալ շարթու քանի մի հոգի երեւելիներեն առոր քաղաքա եւ կան, մէծ չերմանանդութիւն ցուցնելով և զառոր Երկիրը համբաւելով, և անմիջապէս Յորդանանու կողմերը գնացին երկիրը քննելու համար, ինչպէս կըսուի :

Յոպակէն մեր յարգոյ թղթակից Պ. Արապիսն Յ. Խուրատեանցը սոյն նիւթիս վերայ ուրիշ պարագաներ եւս հազարդելով մէջ՝ կը փութամբ հրատարակել :

Յոպակէ, 21 սեպտ:

« Բաւական ամիսէ ի վեր սպասուած ամերիկացիք՝ ամսոյս 10/22 ին շաբաթ զինի կիսաւուր քառասուն երեք օր ծովին վերայ Ճանապարհորդելէ զինի, Նէլլի Շէփրն նաւով, Ամերիկայի Պօսթոն քաղաքէն, խաղաղութեամբ նաւահանգիստս հասան : Վիւրակէ և երկուշաբթի ծովին վերայ մեալէն զինի՝ երեքշաբթի օրն ցամաք եւսն, ու քաղաքիս արեւելեան կողմը ծովիցերքին վերայ վրանները շարելով հոն իջեւանեցին :

« Կատ զուարձալի եր տեսարանը, այն ի՞նչ արտգութեամբ վրանները շարուեցան, այն ի՞նչ աշխատասէր մարդիկ ամեն մարդ, ծեր ու երիտասարդ կ'աշխատէր, ուրը նաւէն եկած կահ կտրասիքը վրանները կը տանէր, որը փայտերը իրենց տեղը կը շարէր, որը աշխատաւոր ծերի մ'օգնութեան կը հասնէր, ուրիշմ'իրեն պատկանեալ գործի մը կը զբաղէր, վերջապէս ամեն կողմ կ'աշխատէին, և ոչ մէկը պարագ էր :

« Ասոնց թիւն է մէծ պղտիկ՝ հարիւր յիսուն և վեց հոգիք, երեսուն կամերեսուն և հինգ ընտանիքէ բաղկացեալ, որոնց մէջ ամեն տեսակ գոր-

sonne digne de foi, laquelle ajoute, que les quarante familles sus-dites ne sont que précurseurs d'autres, qui doivent arriver d'ici à peu de temps; elles seront suivies d'une nouvelle colonie de 3000 personnes. Quelques uns des plus notables d'entre eux sont arrivés, il y a quinze jours, à Jérusalem; ils se distinguent notamment par la grande dévotion qu'ils ont à la Terre-Sainte. Ils sont partis au Jourdain pour explorer le terrain.

ծաւորներ կան . գլխաւորաբար անանկ հիւսներ կան՝ որոնք չինդ շաբթուան մէջ կարող են ահագին նաւ կամ շոգենաւ շինել: Ասոնց մէջ յիշուելու արժանի են երկու ձարտար բժիշկները, որոնք ձրիաբար ամեն աստիճանի մարդկանց կը նային, և այս քիչ միջոցիս մէջ, շատ մը հիւսներ բժշկեցին: Ասոնց ամենն աւ ինչպէս յայսնի է, առ հասարակ անդղերէն լեզուով կը խօսակցին, և բողոքական են, բայց ամեննեւին կրօնից խարութիւն չունին, ինչպէս Ամերիկայի շատ նահանգաց, և ամեն քաջակիրթ անձանց սովորութիւնն է: Ամէն մէկ ընտանիք՝ յատուկ իւր տախտակեայ տունը ունի, որուն մէջ այլեւ այլ սենեակներ ալ կան: Այժմ գեւ եւս ամենն ալ ծովիցերքին վրայ են, նաւին պարպելուն զբաղած, որ հազիւ թէ 5—6 օրէն կը լիննայ, յետոյ յատուկ տեղ մի առնելու գիտաւորութիւն ունին, որպէս զի իրենց տունները շարելով ամեն մէկը իւր տունը քաշուի:

« Այդ ամերիկացւոց այս երկիրը գալով բուն գիտաւորութիւննին է արտերը գործիքներով վարել, տնկել, երկիրը պտղաբերել, ու աշխատութեան գիւրին կերպը Արաբացւոց սովորեցնել. եկող տարի գարձեալ խումբ մի գալու է, եթէ օգն ու երկիրը ասոնց յարմար գան, և քիչ ժամանակէ մը շոգենաւ մը պիտի հաստատեն, նաւահանգստէս Ամերիկաց

Երթալու, և անտի հոս գալու : Առ սոնց ամենն ալ ընկերութիւն մ' են, ու մէկ գլուխ մ' ունին Պ. Ատամա անունով, որուն յորդորմամբն ու քաջալերութեամբը այս տեղերս եկած են : Յիշեալ պատուաւոր ու հարուստ անձը, անցեալ տարի ուխտի եկաւ, սուրբ տեղիքը և Պաղեստինի մեծ մասը պտղացաւ, այն ատեն իւր այս գիտաւորութիւն յայտնեց : Կը յուսամ, ու կը խնդրեմ յԱռառուծոյ, որ ասոնց միջոցաւ այս երկիրները բարեկարգուին ու յառաջանան :

“ Ամսոյս 23/11 ին Պէրութի Պաղվոյ ընդհանուր հիւպատոսը ընտանեօք յատուկ շոգենաւով մը Պէրութէն եկաւ, ու նոյն օրը Ոչմէկ գընաց, սուրբ Երուսաղէմ ուխտի երթալու դիտաւորութիւն . բայց նոյն գիշերը Պէրութէն հեռագիր մը ընդհանուր հիւպատոսը ետ կոշեց, որ պարտաւորեցաւ Ոչմէկն վերադառնալ և հետեւեալ օրը նոյն շոգենաւով Պէրութ երթալ . պատճառը ըստոյգ կերպիւ մը չայստնուեցաւ :

“ Եաեւ ամսոյս 29/17 ին, Ամերիկայի Ծայդոնտէռուկա ֆրգամսնը հասաւ Լ. Պօլսէն, որուն պաշտօնատարները Երուսաղէմ ուխտի ելան . վերադառնալուն Վիրիտ երթալու են . . .”

“ Առատ անձրեւ ունիք այսօր ”.

Քաղաքիս վսեմափայլ կառավարիչ Իզզէթ փաշան, որ քանի մը ժամանակէ ի վեր Պաղայի կողմերը կը գտնուէր արաբացւոց ոմանց մէջ ծագած խուօթութիւնը հանդարտեցը նելու համար, անցեալ ամսոյ 18 ին դարձաւ Երուսաղէմ :

— Ծայդագիրս և թէ շրջակայ

գիւղօրէից առողջական վիճակը՝ գուհութիւն Աստուծոյ լաւ է : Աեպտեմբերի 21 ին առաջին անգամ անձը եւելով, որ կլիմայիս նկատմամբ սովորականէն գրեթէ ամսս մի յառաջէ, սկսաւ օդն ալ զովանալ և առաւել մաքրութիւն :

— Աղեքսանդրից կողմերը քոլերայի գէպք պատահելով, ինչպէս սեպտեմբեր ամսոյ 23 ին հեռագրաւուրը հազորդած էր հոս, հետեւապէս այն կողմէն Յոպակէ եկող շոգենաւերը տասը օր քարանթին պիսի պահեն :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋՔ

Երդումն յաւելեալ յօրէնս՝ ցուցանէ նոյն իսկ զանիրաւութիւն օրինին :

Լաւ է անսալ բարեշնորհ ողոքանաց կամակոր մտօք, քան առ հարկի զիջանել բռնութեան :

Եորանոր կանոնադրութիւնք հակառակ ոգւոյ և բարուց ժողովը դեան, առաւել վնասակարք են քան օգտակարք :

Օրէնք որ չեն հիմնեալ ի վերացարդարութեան և հաւասարութեան, են առաւել պատիժ ծանրացեալ ի վերայ մաաց և սրտի ժողովլոգեան, և խափանարար յառաջադիմութեան նորա :

Համամութիւն բաղմութեան յօդտակար ձեռնարկութիւնս, ունի զզօրութիւն օրինաց :

ՎՐԻՊԱԿ

Աեպտեմբեր ամսոյ Ոիօնի 140 երես, 2 էջ, 27 տող ի՞նի՞ո՞ւ-ի՞նի՞լլ, փոխարինութիւնը կարդալու է :